



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

58, 59, 60, 61,
62, 63, 64, 65,
66, 67, 68, 69, 70,
71, 72, 73, 74, 75

2

L-85

2010



2

ԼՍԱՐԱՆ

ՀՈԳԵՇԱՀ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ

ԵՒ

ԽՐԱՏԱԿԱՆ ԲԱՆԻՑ,

ԵՒՍ ԵՒ

ՊԷՍՊԷՍ ԿԵՆՅԱՂՕԳՈՒՏ ԳԻՏԵԼԵԱՑ.

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՍՈՌՈՒՄԸ ՈՒ ՏԱՃԱՐԻՆ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ.

Տպագրեալ

ի Հայրապետութեան վեճ. Տեառն

ՏԵԱՌՆ ԳԷՈՐԳԱՑ Դ,

Աստուածընտիր Կաթողիկոսի Ամենայն Հայոց.



Ի ԹԷՂՈՒՍԻԱ,

Ի Տպարանի Խաչիպեան Ուսումնարանին.

1868 = 033Է.

26421-4.2.

Չլատրանս զայտասիկ ի խնդրոյ եւ ի յորդո-
րանաց եկեղեցական եղբարց ոմանց երկա-
սիբեալ, եւ արդեամբք Վսեմապատի ՄԿՐՏԻԶ
ՊԷՅԻ ԿԱՐԱՊԵՏՆԱՆ ԲԷԻԶԵԱՆՅ սպագրեալ
ընծայեմք ի վայելս տեսաիրաց եւ ուսումնա-
սենց մեռազնեայց.

ԳՍԲՐԷԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՅՎԱԶԵԱՆ.

Ի Մարտի 1868.

Ի ԹԷՆԳՈՍԻՍԱ.



11411-57

Дозволено Цензурою. Тифлис, 30 Октября 1868 г.

ԵՐՈՒՍԱԳԵՄԻ ԱՌՈՒՄՆ ՈՒ ՏԱՀԱՐԻՆ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ.



Չխարհիս երեսը տեղեր կան որ ուրիշ-
ներէն աւելի մեծ անուն հանած են
այլ եւ այլ պատճառներով. եւ ինչպէս
որ հռչակաւոր մարդիկը կարծես թէ ի-
րենց փառաւոր անունները իրենց ճակտին
վրայ ոսկի գրերով գրուած ունին, այսպէս
եւս այն տեղերն ալ իրենց համար մէկմէկ ճա-
կատագիր ունին՝ կասէ քաջ բանաստեղծն Լամար-
թին: Մարդկային ազգիս գլխէն անցած ո՞ր եւ իցէ
երեւելի գիպուածներ այս կամ այն տեղը պատահած

են. այն տեղերը այն դիպուածներուն իբր թէ թատերական տեսարաններն են. թատրը ձեւացընող զարմանալի մարդիկը տեսարանին վրայէն երթալէն վերջն ալ՝ մարդուս երեւակայութիւնը երկար ատեն այնտեղը դեռ կիմտուէ զանոնք կամ նոցա շուքերը, սէր կը ձգէ նոցա բնական տեղերուն վրայ, կերթայ նորէն կքալէ աչքէ կանցընէ այն տեղերը, մէկուն մէկալին կպատմէ հոն տեսածները, լսողներուն միտքը կքաշէ կտանի այն բաներուն վրայ՝ որ հարիւրաւոր ու հազարաւոր տարիներով առաջ պատահեր են: Թէ որ բանաստեղծներուն ու պատմաբաններուն տրուած է այնպիսի տեղերուն անունը մեծցընել ու փառաւորել, զարմանք չէ որ բարեպաշտ եւ կրօնասէր մարդոց ալ տրուած լինի այն տեղերը սրբացընել ու մէկմէկ ուխտատեղի դարձընել: Եւ ահա այնպիսի սուրբ եւ սրբազան ուխտատեղիներէն մէկն եղած է հազարաւոր տարիներէ ի վեր Երուսաղէմ՝ քաղաքը:

Ամէն ազգ իւր սրտին աւելի մօտիկ՝ աւելի ցանկալի ու սիրելի տեղեր՝ քաղաքներ ունի. այսպիսի է Յոյնին համար Սպարտան ու Աթէնքը, Իտալացւոյն — Հռոմը, Ասորւոյն — Դամասկոսը՝ այսինքն Շամը՝ Պարսկին — Պերսեպօլիսն ու Ասպահանը, Հայուն — Արտաշատը, Անին, Մասիսն ու Վանը, եւ Հրէին՝ մանաւանդ թէ բոլոր աշխարհիս ամենայն քրիստոնեայ ազգերուն համար՝ անմոռանալին Երուսաղէմ:

Ամէն ազգէ անհամար ուխտաւորներ ամէն տարի գարնան բերանը ծովեր ցամաքներ անցնելով կեր-

թան Երուսաղէմ, որ այն սուրբ երկրին աստուածա-կոխ քարերուն քսեն իրենց երեսները, այն հողէն ափ մը վուշի առնուն տանին իրենց աները: Երուսաղէմի անունն անգամ զարմանալի քաղցրութիւն մը ունի ամենուն համար, այնպէս որ կարծես թէ Երուսաղէմը ամէն մարդու հոգւոյն հայրենիքն է. ամէն մարդ պատուով ու պատկառանօք բերան կառնու Երուսաղէմի անունը՝ որ ի մանկութենէ լսած է ու կլըսէ միշտ իւր խնկահոտ եկեղեցիներուն աղօթքներուն ու շարականներուն մէջ:

Այն սուրբ քաղաքին պատմութիւնը ընդարձակօրէն պատմելու, կամ մէջի ուխտատեղիներուն մանրամասն ստորագրութիւնն անելու միտք չունիմք այսօր. միայն կուզեմք ասել՝ թէ ինչ կերպով կատարուեցաւ այն քաղաքին ու տաճարին վրայ Քրիստոսի Տեառն մերոյ ցաւագին սրտով արած սոսկալի մարգարէութիւնը, այսինքն թէ ինչպէս առնուեցաւ Երուսաղէմ՝ Հրէից ձեռքէն եւ ինչպէս կործանեցաւ հոյակապ տաճարն որ քարը քարի վրայ չմնաց:

Քրիստոսի Տեառն մերոյ զալտենէն առաջ այնքան էր Հրէից սէրը այն իրենց մայրաքաղաքին վրայ, որ անկից քշուիլը կամ անոր տեսութենէն տարիներով զուրկ մնալը՝ ամէն պատիժէ պատուհասէ վեր կդընէին. Երուսաղէմի անունովը երդում կանէին, Երուսաղէմի անունովը կպարծենային, Երուսաղէմը աշխարհիս կեդրոնը կհամարէին. դրսի քաղաքներն ու գեղերը բնակողներն ալ եթէ գօնէ տարին մէկ անգամ՝ Երուսաղէմ՝ չերթային ու տաճարին մէջ ա-

զօթք եւ զոչ չմատուցանէին, իրենք զիրենք աստուածապաշտութենէ հեռացած՝ Աստուծոյ երեսէն ընկած մարդոց տեղ կզնէին: Ուստի ատենով՝ երբ իրենց մեծամեծ մեղքերուն պատճառաւ Բաբելացւոց նաբուքոդոնոսոր թագաւորին ձեռքը մատնուեցան (Քրիստոսէ 387 տարի առաջ) ու Բաբելոն գերի տարուեցան, այնտեղը իրենց ողբն ու լացը գլխաւորապէս ասոր վրայ էր որ երուսաղեմէն զըրկուած՝ քշուած՝ աքսորուած էին. իրենց պանդըխտութեան ու տառապանաց ամենէն մեծը այն կհամարէին: Իրենց բերանը անդադար Դաւիթ մարգարէին այս սաղմոսն էր որ կասէին ու կուլային.

«Առ գետս Բաբելացւոց, անդ նստէաք եւ լայաք որպէս յիշեցաք մեք անդ զՍիոն.» —

Բաբելացւոց գետերուն քովը մեք նըստած կուլայինք,
Ա՛հ սըրտերնիս կըկըտըրտէր՝ երբոր Սիոն յիշէինք:

«Ի մէջ ուռեաց նորա կախեցաք զկտակարանս մեր.» —

Ո՛ր դընէինք սուրբ գըրքերը. տուն ու տաճար չունէինք,
Խեղճ գըկսակոր ուռիներուն մէջ զանոնք կըկախէինք:

«Անդ հարցանէին գերիչք մեր զբանս օրհնութեան. գերեվարք մեր ստիպէին զմեզ եւ ասէին. Օրհնեցէք մեզ յօրհնութենէն Սիոնի.» —

Մեր գերեվարքը կասէին. մի՞ թէ դուք երգ՝ տաղ չունիք.
Կըստիպէին ու կասէին. Հերիք լացիք դուք հերիք.
Քիչ մ՛ ալ ուրախ երգեր ասէք՝ ձեր Սիոնի երգերէն,
Այն օրհնութիւնք զըւարթութիւն՝ անոյշ հոտեր կըբուրն:

«Իսկ զինորդ օրհնեսցուք զօրհնութիւնս Տեառն յերկիր օտար.» —

Բայց ինչ կասէք դուք՝ ո՛վ մարդիկ, կամ ինչպէս է կարելի
Որ օտար երկիր երգեմք զերգս Աստուծոյն Իսրայելի:

«Թէ մոռացայց զքեզ՝ Երուսաղէմ՝ մոռացի զիս աջ իմ.» —

Ա՛հ ցանկալիդ Երուսաղէմ. թէ որ ըզքեզ մոռնամ ես,
Թող աջ բազուկըս զիս մոռնայ, տըկար անկալ մընամ ես:

«Կցեսցի լեզու իմ ի քիմս իմ՝ թէ ոչ յիշեցից զքեզ. թէ ոչ նախ նուագեցից զքեզ՝ Երուսաղէմ, սկիզբն ուրախութեան իմոյ.» —

Լեզուս բերնիս մէջը կըպչի՝ թէ չըլիշեմ ես ըզքեզ.
Առաջին երգըս քեզ համար, ուրախութիւնըս դուն ես:

«Յիշեա Տէր զորդիսն եղումայ յաւուրսն Երուսաղէմի, ոյք ասէին, քակեցէք քակեցէք, մինչեւ ի հիմն հասուցէք.» —

Մի՞ մոռնար Տէր եղումացւոց արածն ու ասածները
Երուսաղէմ քաղաքիդ տառապանաց ատենները,
Որ կասէին իրարու. թէ քակեցէք ու քակեցէք,
Քար մի՞ թողուք քարի վըրայ, մինչեւ ի հիմն հասուցէք:

«Դուստր Բաբելացւոց թշուառական, երանի՛ որ հատոյց զհատուցումն քո՝ զոր դու մեզ հատուցեր. երանի՛ որ կալաւ զմանկունս քո՝ եւ եհար զքարի.» —

Ո՛վ Բաբելոն թըշուառական, երնեկ ասեմ այն մարդուն
Որ քու ինձի արածներըք բերէ թափէ քո գըլխուն.
Երնեկ ասեմ այն մարդուն որ քեզնէ իմ ոկս հանէ,
Երբ քու տըղըզդ ոտքէն ասնուս՝ գըլուխնին քարի զարնէ:

Աստուծոյ սահմանած ժամանակն որ եկաւ՝ դարձան Հրեայք Բաբելոնէն Երուսաղէմ, ու տաճարը նորէն շինեցին. բայց հետ զհետէ դարձեալ լցին այն քաղաքը անօրէնութեամբ, տաճարը դարձուցին այր աւազակաց, եւ իրենց ու բոլոր մարդկային ազգիս Փրկիչը այն Երուսաղեմին մէջ չարչարեցին, խաչեցին, մեռուցին. . . Ասոնք աչքին առջեւը բերելով նա ինքն Տէրն մեր, ծաղկազարդին օրը՝ երբ մեծ հանդիսով վերջին անգամուն Երուսաղէմ կմտնէր, քաղաքն որ տեսաւ, աստուածային աչքերէն մարդասիրական եւ հայրենասիրական արցունքներ թափեց ու ասաց. Երանի թէ գոնէ այսօր հասկընայիր քու երջանկութիւնդ. բայց ափսոս որ աչքդ փակեր ես, տեսնելիք չունիս. — «Եթէ գիտէիր դու գոնէ յաւուրս յայտնիկ զխաղաղութիւն քո. բայց այժմ ծածկեցաւ յերեսաց քոց» : — Վասն զի այնպիսի օրեր պիտի գան հասնին վրադ՝ ասաց, որ թշնամիներդ ամէն կողմէն զքեզ սաստիկ պիտի պաշարեն ու նեղութեան մէջ ձգեն, կործանեն զքեզ ու որդիքդ թրէ անցընեն, շէնքերուդ մէկ քարը մէկալին վրայ չթողուն, անոր համար որ չճանչցար քու Փրկիչիդ քեզի գալուն ժամանակը. «Փոխանակ զի ոչ ծանեար զժամանակ այցելութեան քո» :

Տեսնեմք ուրեմն թէ երբ եւ ինչպէս կատարուեցաւ Երուսաղեմի վերայ Քրիստոսի Տեսառն մերոյ այս մարգարէութիւնը :

Քրիստոսի 63 թուականին ասեաները Հռովմայեցւոց կայսրը ներոնն էր, Պաղեստինու եւ Ասորւոց երկրին թագաւոր՝ Ագրիպպաս՝ Հերովդեսի որդին, եւ Հրէաստանի դատաւոր՝ Փլորոս անունով անդուլթ անդգամ հռովմայեցին, որ անտանելի բռնութիւններով կնեղէր Հրեաները : Ներոն հրովարտակ հանեց որ Հրեայք Կեսարիա Պաղեստինացւոց ասուած քաղաքին մէջ քաղաքացի ասուելու իրաւունք չունենան, հապա միայն Յունաց եւ Ասորւոց մնայ այն իրաւունքը : Յոյնին մէկը այն քաղաքին մէջ Հրէից ժողովարանին մօտ տեղ մը ունէր. այն տեղոյն վերայ շէնք մը շինեց այնպիսի կերպով՝ որ ժողովարանը գնացող Հրէից անցու դարձի տեղ չէր մնար : Կեսարիոյ Հրեաներէն մէկքանին գնացին Փլորոսի գանգատ արին եւ շատ ստակ տուին, խնդրելով որ այն շէնքը վերցընել տայ. անիրաւ դատաւորը վողն առաւ, խօսք տուաւ, բայց խօսքին վրայ չկեցաւ : Երկրորդ օրը՝ որ շաբաթ էր՝ ուրիշ Յոյնին մէկը ժողովարանին դրան առջեւը քանի մը թուջուն մորթեց՝ Հրէից զոհագործութիւնը ծաղրը անելու մտքով : Ասոր վրայ սաստիկ խռովութիւն ելաւ քաղաքին մէջ, եւ Հրեայք ու Յոյներն երկու խումբ բաժնուած՝ կատաղաբար ճեծկուեցան իրարու հետ : Այն որ լսեցին Երուսաղեմի Հրեաները, նոքա ալ ոտք ելան. — Նոյն օրերը Փլորոս տաճարի գանձէն տասնըինը տաղանդ փող առնել տուեր էր՝ իբր թէ տէրութեան պիտոյիցը համար. Երուսաղեմացիք ասոր վրայ աւելի նեղացան, եւ մէջերէն ոմանք՝ Փլորոսը նախատելու մտքով՝ սկսան ժողովրդեան մէջ

պտըտիլ ու ստակ մուրալ ասելով, « Ողորմեցէք խեղճ ողորմելի Փլորոսին » : Փլորոս այն միջոցին Սամարիա գնացեր էր . հասաւ կայծակի պէս երուսաղէմ, պահանջեց որ այն իրեն նախատինք անող Հրեաները խփոյն ձեռքը տրուին . երբոր մտիկ անող չգտնուեցաւ, հրամայեց իւր զօրացն որ յարձակին քաղաքացւոց աներուն վրայ, զարնեն ջարդեն կողոպտեն : Այս կերպով այն օրը երեքհազար վեցհարիւր մարդ ջարդուեցաւ ամէն հասակէ : Ագրիպպա թագաւորին քոյրը Բերինիկէ՝ որ այն օրերը ուխտի եկած էր երուսաղէմ, բոպիկ ոտքով գնաց Փլորոսին, աղաչեց որ դադարեցնէ այն ջարդը . բայց քիչ մնաց որ ինքն ալ բարբարոս զինուորներուն թրին բերանը պիտի երթար :

Այն միջոցներուն Հրէից մէջ խումբ մը տաքգլուխ մարդիկ կային որ իրենք զիրենք նախանձայոյց եւ Հայրենասէր կանուանէին, իբր թէ իրենց հաւատքին վրայ ամուր կեցող եւ Հրէաստանի ազատութիւնը ուզող կտրիճներ . թէպէտ եւ գործով շատը անհաւաստներէն աւելի չարութիւններ կանէին, եւ իրենց հայրենեաց վնասու պատճառ կլինէին : Սորա այն խռովութենէն ու ջարդէն առիթ առնելով՝ սկսան քաղաքացիքը աւելի գրգռել Հռովմայեցւոց դէմ, որով երկու կողմէն ալ շատ մարդ սպաննուեցաւ :

Ագրիպպա թագաւորը, որ այն օրերը Աղեքսանդրիա գնացեր էր, երուսաղէմ դարձաւ տագնապած . ժողովուրդը ազազակով կանչուըռտելով՝ լալով ողբալով առջեւը վազեց, կպահանջէր որ թագաւորը մարդիկ յուղարկէ ու հասկըցընէ կայսեր Փլորոսին արած

անիրաւութիւնները : Բայց Ագրիպպա վախնալով որ կայսրը աւելի իւր պաշտօնէին խօսքերուն մտիկ կանէ՝ քան թէ Հրէից գանդաաներուն, երկայն ատենախօսութեամբ մը հասկըցուց ժողովրդեան թէ ինչ վտանգաւոր բան է Հռովմէական կայսերութեան ահեղ իշխանութեանը դէմ գլուխ վերցընելը . պախարակեց այն սուտ ազգասէրներուն արածն որ մէկ կողմանէ ամէն յանցանք Փլորոսին վրայ կուզէին ձեռքել, եւ միւս կողմանէ իրենց խելքը միտքը Հռովմայեցւոց դէմ ապստամբիլ էր, եւ խրատ տուաւ խաղաղասիրաց որ այն անմիտ ազատասէրներէն հեռու կենան : Ժողովուրդը Ագրիպպային խօսքերովը բաւական հանգարտիլ սկսեր էր . բայց երբ նա այս ալ աւելցուց թէ առ այժմ պէտք է Փլորոսի հնազանգ մնաք՝ մինչեւ որ նոր դատաւոր գայ, մեծ տրտունջ ելաւ բոլոր ժողովրդեան մէջ . հասկըցուցին թագաւորին որ ելնէ երթայ իրենց քաղաքէն, ոմանք մինչեւ քարեր ալ նետեցին վրան . եւ նա թողուց երուսաղէմը իրեն խեղճութեանը մէջ, քաշուեցաւ գնաց իւր տեղը :

Այնուհետեւ երուսաղէմի մէջ քաղաքական պատերազմը քանի գնաց սաստկացաւ, նախանձայոյցները տաճարին տիրելով՝ սկսան անկից պատերազմիլ ժողովրդեան հետ . խաղաղասէրները առջի բերան դէմ կեցան նոցա, բայց երբոր հասարակ ժողովուրդը միաբանեցաւ նախանձայոյցներուն հետ, եւ սորբերդին մէջ եղած հռովմայեցի զօրքերը թրէ անցուցին, նախանձայոյցներն ալ յուսահատած՝ սուք ե-

լան Հռովմայեցւոց դէմ, եւ պատերազմը սաստկացաւ: Անտոնիա ամբողջը՝ որ տաճարին հետ կից էր, երկու օր պատերազմելով առին Հրեաները, մէջի Հռովմայեցիները ջարդեցին. Հերովդեսի պալատը մտան՝ կողոպտեցին, յետոյ կրակ տուին այրեցին: Միւս աշտարակներուն մէջ մնացած Հռովմայեցիք տեսնելով որ Հրէից հետ գլուխ ելնելու ճար չունին՝ յանձն առին անձնատուր լինել եւ դէնքերնին վար դրին. քայց Հրեայք սոսկալի անօրէնութեամբ յարձակեցան խսկոյն անդէն Հռովմայեցիներուն վրայ ու զամէնքն ալ ջարդեցին: Այս բաները երբոր լսուեցան դրսի քաղաքները, անոնց մէջ ալ Հրեաները ոտք ելան, քայց երեւելի յաղթութիւն մը չանելով՝ իրենք ջարդուեցան հազարներով:

Երուսաղեմի մէջ գանուող քրիստոնեաները տեսնելով որ յայտնապէս եկեր հասեր են այն քաղաքին վրայ Քրիստոսի Տեառն մերոյ գուշակած սարսափելի օրերը, յիշեցին նորա ասածը թէ «Յայնժամ որ ի Հրէաստանի իցեն՝ փախիցեն ի լերինս, եւ որ ի միջի նորա իցեն՝ խուսեցեն, եւ որ ի գաւառան իցեն՝ մի մտցեն ի նա.» այսինքն Այն ատեն Հրէաստանի մէջ եղողները՝ լեռները պիտի փախչին, Երուսաղեմի մէջ գանուողները ծակէ ծակ պիտի մտնեն, եւ դրսի քաղաքներն եղողները ներս պիտի չմտնեն. — ուրիշ շատ խաղաղասէր Հրէից հետ իրենք ալ ելան փախան Երուսաղեմէն ու Պելլա քաղաքը քաշուեցան:

Իսկ քաղաքին մէջ մնացած խեղճերը գիշեր ցորեկ ահի դողի մէջ էին, չէին գիտեր թէ այն սարսա-

փելի կոտորածներուն՝ աւերմունքներուն՝ կրակներուն՝ աղաղակներուն ծայրը ուր պիտի երթայ: Նոցա սարսափը ասով եւս կաւելնար որ այն միջոցին պէս-պէս ահաւոր նշաններ կպատմուէին քաղաքին մէջ: Օրինակի համար՝ կասէին թէ թրի ձեւով գիսաւոր աստղ մը երեւցեր է որ ամբողջ տարի մը կեցեր է Երուսաղեմի վրայ: — Պատերազմէն առաջ զատկի գիշերը տեսնուեր է տաճարը բոլորովին լուսով պատած: — Ուրիշ անգամ տաճարին պղնձէ ահագին դռներէն մէկը, որ քսան հոգի հազիւ կրնային շարժել, կէսգիշերուն յանկարծակի բացուեցաւ ինքիրմէ: — Մէկ իրիկուն մը օգուն մէջ պատերազմական կառքեր ու ձիաւորներ երեւցան որ քաղաքին վրան ու չորս դին կպտըտէին: — Պենտեկոստէի տօնին գիշերը՝ երբոր քահանաները տաճարը մտան, սոսկալի աղաղակներ լսեցին. անոնց մէջ այսպիսի ձայներ ալ լսուեցան թէ «Ելնեմք ասկից, ելնեմք:» — Պատերազմէն մէկ երկու տարի առաջ Յեսու անունով միամիտ գեղացի մը Երուսաղէմ եկած լինելով տաղաւարահարաց տօնին օրը, սկսաւ կանչուըռաւել. «Ձայն յարեւելից, ձայն յարեւմտից, ձայն ի չորից հողմոց. ձայն ի վերայ Երուսաղեմի եւ տաճարին. ձայն ի վերայ փեսայից եւ հարսանց, ձայն ի վերայ ամենայն ժողովրդեան:» Այս ասելով մարդը գիշեր ցորեկ փողոցներուն մէջ կվազվըռաւ: Բռնեցին զինքը՝ դատաւորին առջեւը տարին, սկսան ծեծել. ամէն մէկ զարկածներուն այս կասէր. «Վայ, վայ Երուսաղեմի.» ուրիշ ամենեւին խօսք մը չելաւ բերնէն. ոչ զինքը

ճեծողներուն անէծք կուտար, ոչ հաց տուողներուն շնորհակալութիւն կանէր, եւ բոլոր պատերազմին ժամանակը չգաղթեցաւ փողոցներուն մէջ վազելէն ու նոյն խօսքերն ասելէն, մինչեւ օր մը յանկարծ Հռովմայեցոց նետած մէկ քարովը դարնուեցաւ. իսկոյն վրայ բերաւ թէ «Վայ եւ ինձ», եւ այնպէս ընկաւ մեռաւ: — Տակիտոս Հռովմայեցի հեթանոս պատմիչն ալ կպատմէ այս բաներս ու կզարմանայ որ Հրեաները այսչափ նշաններով չզգաստացան: Բայց ասոնք տեղնիտեղը պատմողը Յովսեպոս անունով հռուջակաւոր երբայեցի պատմագիրն է, որ այն ժամանակները 50 տարեկան կտրիճ էր, գիտուն՝ քաջասիրտ ու խոհեմ մարդ:

Մինչդեռ երուսաղեմացիք գուշակելով իրենց գըլխուն գալիքը, մեծ գործունէութեամբ կաշխատէին քաղաքն ամրացնելու, զէնքեր՝ նիզակներ կշինէին, մեքենաներ կպատրաստէին, զինուորական փորձեր՝ կրթութիւններ կանէին, — ներոն կայսրը Յունաստան եկած լինելով 66 թուականին, տեղեկացաւ Հրէից ապստամբութեանը. հրամայեց Վեսպասիանոս քաջ զօրավարին որ վաթսուն հազար զօրքով երթայ Հրեաները նուաճէ:

Վեսպասիանոս Հրէաստան մտնելէն ետեւ հրաման յուղարկեց իւր Տիտոս որդւոյն՝ Աղեքսանդրիա քաղաքը, որ նա ալ հինգերորդ ու վեցերորդ լեզէոնները՝ այսինքն մեծամեծ գունդերը առնու եւ գայ իրեն քով: Բայց ինքը մինչեւ երկու տարի Հրէաստանի այլ եւ այլ քաղաքները Հրէից ձեռքէն առնե-

լու հետ եղաւ. գրեթէ մէկ ամուր բերդ կամ բերդաքաղաք մը չմնաց որ չառնէր, բայց ամէնն ալ երկար երկար պաշարումներով ու բիւրաւոր Հրեաներ ջարդելով: Իսկ երուսաղեմի պաշարումը ետքի թողուց. վասն զի գիտէր որ Հրեայք անոր մէջ արդէն իրարու հակառակ խումբեր բաժնուած, մէկմէկու հետ ճեծկուելու զբաղած, իրենք զիրենք օրէ օր աւելի տկարացնելու վրայ էին:

Հրէից մէջ երկպառակ խումբերը երեք էին գըլխաւորապէս. մէկուն գլուխն էր Շմաւոն անունով մէկը, երկրորդինը Յովհան, երրորդինը Եղիազար՝ որ նախանձայոյզներուն հետ մէկտեղ տաճարին տիրապետած էր, ու անկից կպատերազմէր Յովհաննու եւ Շմաւոնի զօրացը հետ: Փողոցները արդէն լցուած էին մեռելներով. եւ ոչ միայն թաղող չկար, այլ եւ եթէ յանկարծ մէկը այն խեղճութեանց վրայ ցաւակցութիւն ցուցնէր, իսկոյն կոպանուէր՝ իբրեւ ազգատեաց դաւաճան, եւ Հռովմայեցոց բարեկամ: Իսկ իրենք՝ այն երեք իրարու հակառակ կուսակցութիւնները՝ անիրաւութիւն եւ անզգամութիւն չկար որ չգործէին ողորմելի քաղաքին մէջ:

Այն միջոցին ներոն կայսրը մեռաւ, եւ Հռովմայեցոց տէրութիւնը մեծ շփոթութեանց մէջ ընկաւ. եւ մինչդեռ Հռոմին մէջ մէկը մէկալը կայսերութիւնը յափշտակելու ետեւէ էին, Ասորոց երկրին ու Հրէաստանի զօրքերը ամէնքը մէկ բերան կայսր ընտրեցին Վեսպասիանոս զօրավարը 69 թուականին:

եւ նա Հրէաստանի նուաճումն ու Երուսաղեմի առու-
մը իւր որդւոյն Տիտոսի յանձնեց ու դարձաւ գնաց
Հռոմ:

Տիտոս 70 թուականին գարնան բերանը գնաց պա-
շարեց Երուսաղեմը հիւսիսային եւ արեւելեան կող-
մէն: Տասնըհինգ օր սաստիկ պատերազմ եղաւ. Հռով-
մայեցիք առաջին պարիսպը փլուցին՝ ներս մտան,
բայց Հրեայք երկրորդ պարսպին ու աշտարակնե-
րուն վրայէն աւելի կատաղութեամբ կպատերազ-
մէին: Քանի մը օրէն այն պարիսպն ալ առին Հռով-
մայեցիք ու քաղաքին դրսի թաղերուն տիրեցին,
բայց խիստ շատ ալ մարդ կորուսին իրենցմէ. վասն
զի Հրեայք ամէն մէկ փողոցը իրենց պատերազմի
ասպարէզ եւ ամէն մէկ տունը իրենց բերդ դարձու-
ցած՝ յուսահատաբար կը կռոււրտէին, մինչեւ որ ամէն
կողմէն քշուեցան հալածուեցան, ու իրենց ձեռքը
միայն երրորդ պարիսպը, քաղաքին վերնակողմը,
տաճարն ու Անտոնիա ամրոցը մնացին՝ որ քաղաքին
ամենաբարձր տեղերն էին ու անառիկ կհամարուէին:
Շմաւոն եւ Յովհանն իրենց զօրքերովը մտքերնին գրեթե
էին որ մինչեւ իրենց արեան վերջի կաթիլները թա-
փելու չափ պատերազմին. եւ յիրաւի, եթէ Երու-
սաղեմացիք իրենց մէջ անմիաբան չլինէին, եւ ներսը
պատրաստուած պաշարներուն մեծ մասը իրենք ի-
րենց ձեռքովը կրակ տալով փճացուցած չլինէին,
շատ աւելի երկարատեւ պաշարման կգիմանային:

Յովսեպոս՝ որ այս բաներուս ականատես պատ-
միչն է, քահանայի որդի էր՝ պատերազմի ժամա-

նակ Հռովմայեցւոց ձեռքը գերի ընկած, բայց իւր
հանճարոյն ու կտրճութեանը համար շուտով ազա-
տած, եւ Վեսպասիանոսի ու Տիտոսի սիրելի եղած:
Տիտոս յուզարկեց Յովսեպոսն որ խօսք անցընէ Հրէից
անձնատուր լինելու. եւ նա գնաց՝ պարսպին մօտե-
ցաւ, երկար խօսքերով ու ճարտասանութեամբ հաս-
կըցուց նոցա որ դադրին զուր տեղը Հռովմայեցւոց
դէմ կենալէն, խնայեն խեղճ քաղաքացւոց, գիտնան
որ Աստուած է զիրենք Հռովմայեցւոց ձեռքը մատ-
նողը՝ իրենց անթիւ անօրէնութեանցը համար: Բայց
նոքա Յովսեպոսի խօսքերուն պատասխան տալու տեղը՝
անէժքով ու հայհոյանքով կանչուըռտեցին անոր դէմ
ու նետեր արձըկեցին վրան:


Երրորդ պարիսպը առնելու համար մեծամեծ պատ-
րաստութիւններ տեսաւ Տիտոս, եւ չորս հատ պատ-
նէշ (մերերիս) կանգնեց, Հրեայք պատնէշներուն մէ-
կուն տակը ական (շաղրւ) փորեցին, ու այն պատնէշը
կործանեցին, միւսներուն ալ վրան յարձըկեցան՝
քանդեցին, պատերազմական մեքենաներուն կրակ
տուին այրեցին, եւ մինչեւ Հռովմայեցւոց բանակին
մէջ մտնելով՝ մեծ ջարդ տուին զինուորներուն: Տի-
տոս այնուհետեւ միտքը դրաւ որ սովի բռնէ քաղաքն
ու այնպէս առնու, վասն զի գիտէր որ արդէն սկսած
են քաղաքացիք անօթութենէ ջարդուիլ:

Հրէից յոյսը դրսի օգնութենէ ու պաշարէ բոլո-
րովին կտրելու մտքով՝ հրամայեց Տիտոս իրեններուն
որ պատ մը քաշեն քաղաքին չորս բոլորը. զինուոր-

ներն ալ իսկոյն ձեռք զարկին ու բարձրացուցին պատը անհնարին արագութեամբ. երկայնութիւնը 39 ասպարէզ էր, եւ վրան 13 աշտարակ ունէր: Խեղճ քաղաքացիք մահուան ամէն տեսակը աչքի բուն առջեւն ունէին: Շատ մարդիկ իրենց տունը տեղը՝ չափ մը ցորենի կամ գարիի տեղ կծախէին, շատերն ալ քաղցած կամ իրենց սուտ պաշտպաններուն թրին մասնուած կմեռնէին: Վասն զի այն անգութ նախանձայոյզները մէկ անէն մէկալը մտնելով՝ խեղճ ընտանիքներուն ետքի պաշարը բերաններէն կքաշէին կառնէին, իսկ զհարուստները ոչխարի պէս կմորթէին ու փողերը կյափշտակէին՝ ասելով թէ նոքա մատնիչ են հայրենեաց: Քահանայապետին անունը Մատաթիա էր. անօրէն Շմաւոնը զրպարտեց զինքն որ իբր թէ Հռովմայեցոց կողմը կուզէ անցնիլ, եւ ըսպաննեց երեք որդիքներովն ու ուրիշ քանի մը երեւելի քաղաքացիներով մէկտեղ: Սովին պատճառած արհաւիրքը խելքէ մտքէ դուրս բան էր: Կինը էրկանը բերնէն հացին պատառը կքաշէր, որդին ծերունի հօրը բերնէն, մայրը զաւակին բերնէն: Ոմանք քաղաքէն դուրս կելնէին զէնքով՝ որ քիչ մը խոտ քաղեն ուտեն. Տիտոս զանոնք բռնել խաչել կուտար. օրը մինչեւ հինգհարիւր հոգի ափսոսալէս սպանուեցան: Նախանձայոյզները ձայն մը հանեցին որ ահա ո՛վ որ Հռովմայեցոց կողմը անցնի՝ իսկոյն կխաչուի. Տիտոս նոցա խօսքին ստույթիւնը ցուցնելու համար՝ շատ գերիներու թելերը կտրեց ու զիրենք ափսոսալէս գարձուց քաղաքը որ երթան ճշմարտութիւնը պատմեն:

Այս ամենայն խեղճութիւնները տեսնելով եւս, նախանձայոյզները եթէ մէկուն բերնէն խօսք մը լըսէին անձնատուր լինելու վրայ՝ իսկոյն թրէ կանցընէին. քաղցած մեռնող մը որ տեսնէին՝ ծաղր անելով կնախատէին, եւ իբր թէ նորա տանջանքը կարճեցընելու համար՝ թրերնին անոր փորը կխօթէին գիւական ծիծաղներով ու կըմեռցընէին: Փողոցները մեռելներով լցուած էին. Հրեայք զանոնք թաղելու ճար չունենալով՝ քաղաքին չորս գին եղած խրամը (նեկեկը) կնետէին: Մինչդեռ ժողովուրդը սովէն կջարդուէր, նախանձայոյզները տաճարին մէջ զօհի համար պահուած ձէթը կուտէին ու գինին կխըմէին: Հռովմայեցոց կողմը փախչելով ազատողներէն շատն ալ՝ մէկէն ի մէկ չափազանց բան ուտելով կմեռնէին: Զինուորները Հրեայ մը տեսան որ ազբեւաց մէջ իւր կուլ տուած ոսկին փնտռեց գտաւ. այս որ լսեցին Հռովմայեցիք, մէկ գիշերուան մէջ երկու հազար Հրէի փոր ճըղքեցին որ ոսկի գտնեն հանեն: Տիտոս արգելք հանեց այս չլըսուած բարբարոսութեան դէմ, բայց մտիկ անող չեղաւ:

Յովսեպոս նորէն գնաց խօսեցաւ Հրէից որ անձնատուր լինին. քիչ մնաց որ քարերով մեռցընէին զինքը, կամ բռնէին քաշէին իրենց մէջ ու կտոր կտոր անէին: Ուստի եւ Տիտոս պաշարումը սաստկացուց. Անտոնիա ամբողջին պարիսպը փլուցին Հռովմայեցիք. բայց զարմացած մնացին՝ երբ տեսան որ Հրեայք ներսէն ուրիշ նոր պարիսպ մը բարձրացուցեր են. անոր հետ ալ պատերազմեցան սաստկու-



Թեամբ, ու վերջապէս առին ամբողջը. այնպէս որ միայն տաճարը իւր պարսպովը մնաց Հրէից ձեռքը: Տիտոս հրամայեց Անտոնիա ամբողջը բոլորովին քանդել փլցընել որ տաճարին առումը գիւրանայ:

Նորէն յուղարկեց Տիտոս Յովսեպոսը Հրէից գըլէսաւորներուն, ինքն ալ մօտեցաւ նոցա, յորդորեց որ խնայեն իրենց տաճարին, չպղծեն ու չքանդեն այն սրբազան եւ հոյակապ շինուածքը, որ Սողոմոն՝



Քրիստոսէ գրեթէ հազար տարի յառաջ Ագոնիրամ ճարտարապետին ձեռքովը հիմներ էր: Բայց Հրեայք կանչուըւտեցին անէծքներով ու հայհոյանքներով թէ Երուսաղէմը Աստուծոյ քաղաքն է, չանուիր տաճարը Աստուծոյ Իսրայելի տունն է, հեթանոսներու ձեռքը չանցնիր. կարծեցին թէ Տիտոսի արած յորդորանքը վախէն է: Տիտոս ալ հրամայեց

իւր զօրացն որ յարձակին Հրէից վրայ: Իրիկուան դէմ էր՝ այն յարձակումն սկսաւ, եւ մութն որ կոխեց՝ Հրեայք շփոթած իրար անցած սկսան մէկ զմէկ ջարդել, մինչդեռ Հռովմայեցիք աւուր հրամանը գիտնալով՝ իրար կձանչնային: Այն պատերազմը մինչեւ երկրորդ առաւօտը եւ գրեթէ բոլոր օրը քշեց, բայց յաղթութիւնը անորոշ մնաց:

Եօթը օրուան մէջ Հռովմայեցիք Անտոնիա ամբողջը քանդեցին, ու անոր աւերակներուն վրայ նոր պատնէշ շինեցին՝ տաճարը առնելու համար: Հրեայք տեսնելով որ Հռովմայեցիք շուտ շուտ առաջ կտանին իրենց պատրաստութիւնները, իրենք իրենց ձեռքովը կրակ տուին տաճարին հիւսիսային եւ արեւելեան գաւիթներուն, որ իբր թէ անով իրենց տեղ բացուի համարձակ պատերազմելու թշնամեաց դէմ:

Տաճարին մէջն ու քովերը եւ քաղաքին վերնակողմը սովը սարսափելի ջարդեր կանէր, այնպէս որ Հրէից զինուորները իրենց կօշիկներուն կաշիները, իրենց կաշի գօտիները եւ վահաններուն վրայի կաշին կըկրծէին: Կնկան մէկուն փոքրիկ տղան կիսամեռընկած կլինի քովը. կինը ամենեւին ուտելու բան չունենալով, յուսահատութենէն աչքը մութ կօխած՝ կառնու տղան կմորթէ կխորովէ ու կսկսի ուտել: Զինուորներն որ արդէն այն կնոջ ունեցած պաշարները յափշտակեր առեր էին, մսին հոտէն իսկոյն կվազեն ներս կմանեն, «Դուն կերակուր ունիս եղեր, շնտ մեզի տուր. ապա թէ ոչ՝ ահա մեռածդ է» կկանչեն: «Առէք՝ կպատասխանէ կնիկմարդը՝ տղուն մսէն մը-

նացած կտորները ցուցնելով. ահա ձեր բաժինը պահէր եմ»: Կտարսափին բարբարոսները այն սոսկալի տեսարանէն ու կպապանձին: «Իմ տղաս է սա՛ կկանչէ կինը. ես իմ ձեռքովս մորթեցի. կերէք, ես ալ կերայ. կնիկմարդէ մը՝ մօրէ մը աւելի գարաղի մի լինիք»: Զինուորները դողդըղալով կձգեն կփախչին: Այն դարհուրելի դիպուածն որ կլրսուի քաղաքին մէջ, շատ սոված մարդիկ իրենք զիրենք



կմեռցնեն. իսկ Տիտոս երկու ձեռքը երկինք կվերցրնէ ու կասէ. «Տէր Աստուած, անպարտ եմ. ես. Հրեայք իրենք են պատճառ այս ամենայն աղետից որ իմ առաջարկութիւններս մերժեցին»:

Տիտոս ամէն ջանք կանէր որ տաճարը պահուի, չայրի, չկործանի. բայց երբոր Հրեայք յուսահատած՝ իրենց ձեռքովը այրեցին գաւիթները, եւ կրակը մարելու անցընելու աշխատող Հռովմայեցւոց վրայ

վերջին կատաղութեամբ յարձրկեցան ու վերջապէս ետ քշուելով՝ բուն տաճարին մէջ փախան լցուեցան, այն ատեն Հռովմայեցի զինուորներէն մէկը՝ առանց հրամանի սպասելու՝ խանձող մը, այսինքն կէս վառած բռնկած փայտ մը առաւ, եւ իւր ընկերներէն մէկուն ուսին վրայ կոխելով բարձրացած՝ տաճարին վերի ոսկէզօծ պատուհաններուն մէկէն ներս ձգեց, եւ իսկոյն կրակ առին մէջի բոլոր վերնատունները:



Վազեց եկաւ Տիտոս, սաստիկ հրամաններ արաւ որ կրակը մարեն անցընեն, բայց այն իրարանցումին մէջ ամենեւին մտիկ անող չեղաւ, եւ կրակը կոխելու ճար չկար: Հրեայք սոսկալի վայնասուն, գոռում գոչում մը հանելով կռուային կրկանչուրուտէին որ այն իրենց սուրբ տաճարը, այն իրենց ազգութեան վերջին ապաստանարանը չքանդուի չփրճանայ, բայց անոր պատերն սկսան ահագին դղրդմամբ ամէն կող-

մէն փլչիլ կործանիլ: Տաճարին անարժան' բայց քա-
 ջասիրտ պաշտպանները հազարներով ջարդուեցան,
 եւ Հռովմայեցիք անհնարին կատաղութեամբ ընկան
 անցունցին զամէնքը, ոչ ծեր նայեցան, ոչ տղայ, ոչ
 կին եւ ոչ քահանայ: Մտաւ Տիտոս տաճարը, մտաւ
 Սրբութիւն սրբոց ասուած կտորը, հիացաւ անոր
 փառահեղ շէնքին ու պայծառութեանը. նորէն ջանք
 արաւ որ գոնէ այն մնացորդը պահպանուի՝ չկոր-
 ծանի, բայց ի զուր. զինուորները լսել անգամ չու-
 ղեցին նորա խօսքերը. եւ երբ Տիտոս իւր զօրա-
 վարներովը տաճարէն դուրս ելաւ, բովանդակ տա-
 ճարը բռնկած՝ ահագին հրդեհ մը դարձաւ: Վեց
 հազարի չափ մարդիկ, ծերեր, կանայք եւ տղայք,
 գաւիթներէն մէկուն վրայ ելած էին. — սուա մար-
 գարէին մէկը գուշակած էր թէ այն տեղը պիտի
 ցուցնէ Աստուած իւր յետին հրաշքը եւ անոր հետ
 մէկտեղ պիտի ազատէ տաճարը. — Հռովմայեցիք
 կրակ տուին նաեւ այն գաւթին, այն վեց հազարէն
 եւ ոչ մէկ հոգի մը ազատեցաւ: Քանի քահանաներ
 կատաղաբար նետեցին իրենք զիրենք կրակին մէջ որ
 տաճարին հետ այրին մոխիր դառնան, եւ քանիներն
 իրենք զիրենք մեռցնելէն առաջ՝ կքաշէին կհանէին
 տաճարին պատուհաններուն եւ տանիքին վրայի սուր
 սուր սակէզօժ երկաթներն ու Հռովմայեցւոց գլխուն
 կնետէին: Ո՞վ կրնար պատմել այն միջոցին եղած
 սարսափելի աղաղակը՝ գոռում գոչումը, որ քաղա-
 քին ամէն մէկ ծայրերէն կլրսուէր, եւ կրակին բո-

ցին ու տաճարին պատերուն փլչելուն ձայնին հետ
 խառնուելով՝ մինչեւ չորս քովի լեռները կթնդա-
 ցընէր:

Քահանաներէն ոմանք պարսպին վրայ ելած՝ հինգ
 օր այն տեղը մնալէն ետեւ սովին չգիմանալով վար
 իջան ու խնդրեցին Տիտոսէն որ խնայէ իրենց. բայց
 նա պատասխան տուաւ թէ «Խնայութեան ատենը
 վաղուց անցաւ: Իմ այսքան համբերելս՝ միայն տա-
 ճարը ազատելու համար էր. այժմ որ տաճարը կոր-
 ծանեցաւ, թող անոր քահանաներն ալ հետը կոր-
 սուին». իսկոյն ամէնքն ալ այն տեղը սպանուեցան:
 Հռովմայեցիք իրենց գրօշակները կանգնեցին տաճա-
 րին արեւելեան գրան առջեւը, եւ տաճարին աւե-
 րակներուն վրայ իրենց աստուածոցը զոհեր մատու-
 ցին. յետոյ ամէնքը մէկ բերան կայսր անուանեցին
 Տիտոսը:

Շմաւոն եւ Յովհան տեսնելով որ ամէն բան ձեռքէ
 ելաւ, հրաման խնդրեցին Տիտոսէն որ իրենց տղոց-
 մովն ու ընտանեօքը ելնեն երթան Սիրոնէն, այսինքն
 քաղաքին վերնակողմէն: Տիտոս խոստացաւ կեանքեր-
 նին շնորհել՝ թէ որ իսկոյն զէնքերնին վար զնեն ու
 անձնատուր լինին. նոքա պատասխան տուին լրբու-
 թեամբ՝ թէ մեք երդում արած եմք որ ոչ երբէք
 անձնատուր լինիմք: Ասոր վրայ Տիտոս աւելի բար-
 կացաւ. հրաման տուաւ իւր զօրացն որ վարի քա-
 ղաքը յաւարի առնուն կողոպտեն ու յետոյ կրակ տան
 այրեն. եւ հրամանը իսկոյն կատարուեցաւ: Յետոյ
 պաշարեց քաղաքին վերի մասը. տանըութը օրուան

մէջ փլուցին Հռովմայեցիք անոր պարիսպն ալ ու ներս թափեցան, զարկին ջարդեցին կողոպտեցին այրեցին ամէն կողմը, եւ շատ աներու մէջ սովէն մեռած գիակները իրարու վրայ գիլուած փտտած գտան: Ներս մտաւ նաեւ Տիտոս, ու զարմանալով պարիսպներուն ու աներուն ամրութեանը՝ գոչեց. «Աստուած է անշուշտ Հրեաները այս բերդերէն քշող հանողը. ապա թէ ոչ՝ մարդիկն ու մեքենաները ինչ կարող են անել այսպիսի աշտարակներու»: Հրամայեց իւր զօրացն որ սրբան Հրեայ գտնեն՝ ձեռքը զէնքով, անլնայ մեռցընեն, մնացածները քշեն գերի տանին. բոլոր քաղաքին գլխաւոր շէնքերն ալ կործանել տրւաւ, ու միայն երեք աշտարակ թողաց՝ Երուսաղեմի ամրութեանն ու շքեղութեանը յիշատակ: Յովսեպոս կասէ թէ այն պատերազմին ու պաշարման ատենը մեռած Հրէից թիւը մէկ միլիոն հարիւր հազարէն պակաս չէր, վասն զի զատկի տօնին պատճառաւը գրտէն ալ շատ Հրեաներ եկած եւ ներսը փակուած մնացեր էին. իսկ Տակիրոս պատմագիրը մեռածներուն թիւը վեց հարիւր հազարի միայն կհասնէ, որ աւելի հաւանական է. գերիները իննսունեօթը հազար էին, որ կէս մը եգիպտոս յուզարկուեցան մետաղ հանելու, եւ կէս մը ուրիշ ազգաց ծախուեցան:

Հռովմայեցիք քաղաքին գետնափոր տեղերը մինչեւ երկու հազար մարդ գտան պահուելու, որք սովէն մեռած՝ որն ալ մէկմէկէ սպանուած: Անոնց մէջ պահուելու գտնուեցաւ նաեւ անօրէնն Յովհանն, որ Տիտոսի հրամանաւը բանտ գրուեցաւ. իսկ Շմաւոնը

գետնի տակէն ճամբայ բանալով, վրան ճերմակ ու ծիրանի լաթեր հագած՝ ծպտեալ գուրս ելաւ երեւցաւ յանկարծ տաճարին աւերակներուն մէջ. բայց շուտով ճանչցուեցաւ ու գերի ընկաւ: Տիտոս Հռովմայեցի Յովհանն ու Շմաւոնը եւ անոնց հետ հինգհարիւր կարիճ՝ գերիներուն մէջէն ընտրուած, ինքն ալ գնաց Քրիստոսի 71 թուականին կայսերանիստ մայրաքաղաքը, ուր ծերակոյտը փառաւոր հանդէս յազթանակի պատրաստած էր Վեսպասիանոսին ու Տիտոսի. որոց առջեւէն կտանէին հանգիստաւոր թափօրին մէջ Երուսաղեմի տաճարին կողոպուտները, այսինքն ոսկիէ սեղանը, եօթնաջահեան ոսկի աշտանակը եւ աստուածաշունչ գիրքը: Հանդէսէն ետքը տարին Շմաւոնը մեծ հրապարակին մէջ ճեծեցին ու յետոյ գլխատեցին. իսկ Յովհանը մշանջնաւոր բանտը ձգուած վերջացուց իւր ողորմելի կեանքը:

Այս կերպով եղաւ ահա Երուսաղեմ քաղաքին առումն ու կործանումը ի Հռովմայեցուց, եւ այսպէս վերջացաւ Հրէից ազգին քաղաքական կեանքը՝ ազգութիւնը, Պատմութեանց մէջ խիստ քիչ կտեսնուի այնպիսի կատաղի յամառութիւն եւ յուսահատ քաջութիւն՝ որով Հրեայք դէմ կեցան այնքան ժամանակ հռովմէական լեգէոններուն անյաղթելի ասուած զօրութեանը. բայց գուցէ նոյն պատմութեանց մէջ մէկ բերդաքաղաք եւս չկայ որ այսպիսի սարսափելի կոտորածներով ու զանազան խեղճութիւններով կործանած ու հիմնայատակ եղած լինի: Իրաւունք ունին

ուրեմն երուսաղէմի որդիքը, այն ողորմելի չրէից խեղճ սերունդները, որ այսօրուան օրս աշխարհիս ամէն կողմը ցրուած են, ու Աստուծոյ անէծքին եւ մարդկանց արհամարհութեան կնիքը կարծես թէ իրենց ճակատին վրայ անջնջելի տպաւորուած կպահեն, — իրաւունք ունին, կասեմ, հազար ութը հարիւր տարիէ ի վեր արտասուալից աչքով նայելու իրենց հոյակապ մայրաքաղաքին աւերակներուն վրայ, եւ երեմիա մարգարէին ողբական խօսքերը բերան առած ողբալու եւ ասելու .

« Զիւրդ զատաւ նստաւ միայնացեալ քաղաքն բազմաժողով, եւ եղեւ իբրեւ կին մի այրի լցեալ տըրամութեամբ ի մէջ հեթանոսաց . իշխանն աշխարհի եղեւ հարկատու ». այսինքն Տեսէք ինչպէս այն բազմամարդ քաղաքը աշխարհիս մէկ կողմը քաշուած՝ անապատ դարձած մնացեր է . կարծես թէ խեղճ որբեւարի կին մի է՝ սիրաբ տրամութեամբ լցուած, եւ ինքը օտար աղգաց մէջ երեսի վրայ մնացած . բոլոր աշխարհիս տէրն ու իշխանը ուրիշներուն հարկատու եղեր է :

« Սուգ առին ճանապարհք Սիոնի, զի ոչ գոյր երթեւեկ ածնից տարեկանաց նորա . ամենայն գրունք նորա եղեն յապականութիւն . տեսին ատելիք նորա, ոտն հարին եւ ծիծաղեցան ի վերայ գերութեան նորա ». — Սիոնի փողոցները սուգի մէջ ընկզմեցան, վասն զի նորա տարեկան տօներուն եկող գնացողները կտրուեցան . նորա ամէն դռներն ալ աւերակներով

լցուեցան . թշնամիները տեսան նորա խեղճութիւնն ու մէկ ոտք մ'ալ իրենք զարկին, ծիծաղեցան նորա գերի գնացած զաւակացը վրայ :


« Զեզ ասեմ, ձեզ ասեմ, անցաւորք ճանապարհաց . դարձայք՝ հայեցարուք եւ տեսէք՝ թէ իցէն երբէք ցաւք ըստ ցաւոց լեալ որ ի վերայ իմ հասին ». — Զեզ կասեմ, ձեզ կասեմ, սլ անցնող դարձողներ, դարձէք նայեցէք միանգամ իմ վրաս ու տեսէք թէ ինձի եկած ցաւերուն նման ցաւեր եղան են երբէք աշխարհիս երեսը :

« Մերժեաց Տէր զսեղան իւր, եւ ի բաց ընկէց զսրբութիւնս իւր . կործանեաց զսարխուս աշտարակեայս տաճարաց նորա . . . կործանեցին յերկիր ըզգրունս նորա, եւ խորտակեցին զնիգս նորա ». — Աստուած իւր սեղանէն երեսը ետ դարձուց, իւր սուրբ տեղերը անարգեց ու մէկգի ձգեց . իւր տաճարին աշտարակներով զարդարուած պատերը փլուց կործանեց . անոր դռները տապալեցան՝ գիտին ընկան, եւ անոնց երկրթէ փականքները կտոր կտոր եղան :

« Պակասեցին աչք իմ յարտասուաց . խռովեցաւ որովայն իմ . յերկիր լուծան փառք իմ ի վերայ բեկման դստեր ժողովրդեան իմոյ, ի սատակել տղայոց ստընդիեցաց ընդ ամենայն փողոցս քաղաքին ». — Աչքս արցունք չմնաց որ թափէի . աղիքներս կըկտրտին իմ ազգիս մայրաքաղաքին այս խեղճութեանը վրայ, երբ կտեսնեմ որ անոր ամէն փողոցներուն մէջ կաթընկեր տղաքը մեռած փռուած են :

«Ծափ զծափի հարին ամենայն անցաւորք ճանապարհի. շէէին, շարժէին զգլուխս իւրեանց ի վերայ դստեր Սիոնի. այս այն քաղաք է ասէին, պսակ փառաց ուրախութեան ամենայն երկրի» . — Ամէն անցնող դարձողները ծափ ծափի կզարնէին, կշրջէին, գլուխնին կշարժէին երուսաղեմի վրայ ու կասէին . Այս այն քաղաքն է որ բոլոր աշխարհիս փառքը պարծանքը՝ պսակն ու ցնծութիւնն էր . . .

Ասոնք եւ այսպիսի ողբեր անելու իրաւունք ունին Հրեաները ամենայն կերպով, անոր խօսք չկայ. բայց քրիստոնեան եւս չկրնար իւր ցաւակցութիւնը յայտնած ժամանակը՝ մոռնալ նաեւ այն սարսափելի խօսքը՝ որ նոցա հայրերն ու իշխանաւորները ասին ատենով ամէնքը մէկ բերան հռովմայեցի Պիղատոս դատաւորին, երբոր նա իրենց Մեսիային՝ Քրիստոսի փրկչին մերոյ անմեղութեանը վկայելով ասաց թէ «Անպարտ եմ ես յարենէ արդարոյ՞ այդորիկ, դուք գիտասջիք» : Ի՞նչ էր նոցա ասածը . «Արիւն դորա ի վերայ մեր եւ ի վերայ որդւոց մերոց» . — Թող դորա արիւնը մեր վրայ եւ մեր զաւակաց վրայ լինի ազգէ յազգ եւ որդւոց որդի :



ԼՍԱՐԱՆ անունով ընթերցմունքները մեզի հնարել տուողն եղած է գլխաւորապէս մերազնեայց մէջ տարածուիլ սկսած ուսումնասիրութիւնը, որով կարգաւ չգիտցողներն անգամ կցանկան գոնէ ընդ մարդուս հարկաւոր գիտելիքները ¹ :

Մէկ կողմանէ այս ազգային ուսումնասիրութեան օրէ օր աճիլը տեսնելով, եւ միւս կողմանէ յորդորուելով քանի մի արժանապատիւ եկեղեցականաց խօսքերէն, ուրախութեամբ ձեռք զարկինք այս աշխատութեան, եւ այնպիսի ընդարձակ շրջան մի տրւինք ասոր՝ որ ամէն վիճակի անձինք եւս իրենց պիտոյիցն ու ակորժակին յարմար նիւթեր գտնեն մէջը :

Վասն զի հոգեշահ պատմութեանց եւ խրատաց կարգը դրած եմք ամէն տեսակ կրօնական, եկեղեցական, եւս եւ բարոյական գիտելիքները, ինչպէս սուրբ գրքոց պատմութիւններ, տէրունական տօներու խորհուրդներուն ու արարողութեանցը բացատրութիւններ, մեծամեծ սրբոց՝ մանաւանդ ազգային սուրբերու վարքեր, եւ այլն : Իսկ կեցնադոզոս գիտելեաց կարգին մէջ կդասաւորեմք ո՛ր եւ իցէ արտաքին, այսինքն պատմական, աշխարհագրական, բնագիտական՝ օգտակար տեղեկութիւններ :

Այսպիսի աշխատութեան ընդհանրապէս երկու գլխաւոր յատկութիւն տալը ամենահարկաւոր ճանչցեր եմք : Առաջինը այս՝ որ ո՞՞՞ր ո՛րքան կարելի է պարզ լինի, այնպէս որ ամէն մարդ կարենայ առանց դժուարութեան հասկընալ : Երկրորդը այս՝ որ ամենայն տօն կամ պատմութիւն կամ գիտելիք առանձին տետրակով հրատարակուի, եւ մէկ տետրակը միւսին հետ կապ չունենայ. այնպէս որ եթէ մէկը ամէն տետրակները չկարողանայ կամ չկամենայ ունենալ, արդէն առածները անկատար ու պակասաւոր գրքի պէս չմնան, եւ իրենց ամբողջութիւնը չկորսնեն . միանգամայն ամէն տետրակներն ալ ստանալ կամեցողը կարենայ շատը ի միասին կազմել տալ հատոր հատոր՝ երբոր նոյն տեսակ նիւթերու վերայ եղած լսարանները շատնան :

(1) Մատակց Ազաւնի 1861 տին, էջ 49.

ՀՐԱՏԱՐԱԿԵԱԼ.

Աւագ Երկուշաբբի.
Աւագ Երեքշաբբի.
Աւագ Չորեքշաբբի.
Երուսաղեմի առուան ու տաճարին կործանումը.

ՊԱՏՐԱՍՏՔ Ի ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ.

Ծնունդ եւ Յայտնութիւն Տեառն.
Տեառնընդառաջ.
Բուն Բարեկենդան.
Աւագ Հինգշաբբի.
Աւագ Ուրբաթ.
Չատիկ սուրբ Յարութեան Տեառն.
Համբարձումն.
Հոգեգալուստ.
Վարդավառ.
Վերափոխումն.
Սուրբ Խաչ.
Սուրբ Հռիփսիմեանք.
Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ.
Որդիք եւ բռնուք սրբոյ Լուսաւորչին.
Մեծն Ներսէս Պարբե.
Սուրբ Սարգիս Չորավար.
Սուրբ Մինաս.
Սուրբ Անտոն ճգնաւոր.
Յօր երանելի.
Քաղեոս առաքեալ, Ս. Սանդուխտ կոյս, եւ Ս. Շուշանիկ.
Ժամ եւ Ժամերգութիւն.
Երկինք.
Արեւն ու Մոլորակները.
Ջերմութիւն եւ Ջերմաբափ.
Մետեորագիտութիւն, կամ Գուշակութիւնք օդոց.
Մրջինք եւ Մեղուք.
Տնտեսութիւն.
Կոստանդնուպոլսոյ առումն ի Տաճկաց.
Եգիպտոսի հնութիւնները, եւ այլն :

Գին իւրաքանչիւր տեսակի 20 ֆոխ.



